ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. նոյեմբերի 21-23-ը Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անուն, ազգանունը՝

Լևոն Խալիկյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա) 21.11.2017-23.11.2017թ.

4. Հրավիրող կողմը՝

Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցել է Եվրասիական տնտեսական միության անդամ-երկրների օրենսդրության ներդաշնակեցման նպատակով Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանման նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնելու մոտեցումների, սկզբունքների և Եվրասիական տնտեսական միության անդամ-երկրներում տեխնիկական կանոնակարգերի պահանջներով չկարգավորվող ապրանքների անվտանգությունն ապահովելու կարգի կիրառման համաձայնագրերին ուղղված որոշումների կայացման և դրանց ստորագրման համար անհրաժեշտ միջպետական ընթացակարգերի անցկացման թեմայով խորհրդակցությանը:

6. Քննարկված թեմաները՝

«Եվրասիական տնտեսական միության անդամ-երկրների օրենսդրության ներդաշնակեցման նպատակով Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանման նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնելու մոտեցումների, սկզբունքների և Եվրասիական տնտեսական միության անդամ-երկրներում տեխնիկական կանոնակարգերի պահանջներով չկարգավորվող ապրանքների անվտանգությունն ապահովելու կարգի կիրառման համաձայնագրերին ուղղված որոշումների

կայացման և դրանց ստորագրման համար անհրաժեշտ միջպետական ընթացակարգերի անցկացման վերաբերյալ» հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Գործուղման շրջանակներում քննարկվել են մի շարք հարցեր.

- Եվրասիական տնտեսական միության անդամ-երկրների օրենսդրության ներդաշնակեցման նպատակով Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանման նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնելու մոտեցումների, սկզբունքների վերաբերյալ Համաձայնագրի նախագծի քննարկում,
- Եվրասիական տնտեսական միության անդամ-երկրներում տեխնիկական կանոնակարգերի պահանջներով չկարգավորվող ապրանքների անվտանգությունն ապահովելու կարգի կիրառման վերաբերյալ Համաձայնագրի քննարկում,
- Պետական վերահսկողություն իրականացնող մարմինների կողմից արտահերթ (ստուգումների ծրագրից դուրս) ստուգումների կազմակերպման դեպքերի քննարկում,
- Վտանգավոր ապրանքների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման ապահովման աշխատանքների կազմակերպում:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպման արդյունքում ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ հաջորդ հանդիպմանը ներկայացնել առաջարկություններ՝ քննարկված նախաձեռնությունների, մասնավորապես՝ վերոնշյալ Համաձայնագրերի նախագծերի վերաբերյալ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Գործուղման շրջանակներում քննարկված հարցերի արդյունքում եղել են կառուցողական առաջարկություններ, մասնավորապես առաջարկվել է Միության անդամ-երկրներից որևէ մեկում Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերին չհամապատասխանող ապրանքի շրջանառություն

բացահայտելու դեպքում տեղեկացնել բոլոր անդամ-երկրներին այդ ապրանքատեսակի և դրա արտադրման երկրի մասին:

10. Գործուղվողը՝

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար Լևոն Խալիկյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը՝

27.11.2017թ.